ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Փետրվարի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ գյուղատնտեսության նորանշանակ նախարար Սերգո Կարապետյանին: Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց նախարարին՝ մաղթելով բարի արդյունավորում կարեւոր ծառայության մեջ:

Նորին Սրբությունը, գուղատնտեսությունը նկատելով երկրի տնտեսության առաջնային ոլորտներից մեկը, ընդգծեց գյուղացիների հոգսի թեթեւացման անհրաժեշտությունը, որպեսզի գյուղական վայրերի բնակիչները կապված մնան հայրենի հողին, չլքեն իրենց օջախները՝ արտագնա աշխատանք փնտրելով օտար երկրներում:

Ս. Կարապետյանն իր հերթին ներկայացրեց առաջիկա ծրագրերը եւ ձեռնարկվելիք այն քայլերը, որոնցով հնարավոր կլինի փուլ առ փուլ լուծել ոլորտի խնդիրները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ նախարարը քննարկեցին նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ նախարարության միջեւ համագործակցության ուղիները: Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի կողմից ներկայացուցիչ նշանակեց՝ համագործակցության առավել արդյունավետ կազմակերպման համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ԽԱՉ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Փետրվարի 15-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայ միասնության խաչ» կազմակերպության ներկայացուցիչներին:

«Հայ միասնության խաչ» հասարակական կազմակերպության գործունեությունն ուղղված է քրիստոնեական արժեքների տարածմանը, մանուկների հոգեւոր դաստիարակությանը, նրանց շնորհների զարգացմանը տարբեր ոլորտներում, ինչպես նաեւ հաշմանդամ եւ ծնողազուրկ երեխաների խնամքին եւ հասարակության մեջ ինտեգրմանը: Կազմակերպության առաքելության իրագործմանը աջակցում է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ քաջալերելով ազօգուտ աշխատանքը եւ տրամադրելով գործունեության ընդլայնման համար անհրաժեշտ շենքային պայմաններ:

Հանդիպման ընթացքում կազմակերպության տնօրեն Գրիգոր Բաբախանյանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը «Հայ միասնության խաչ»-ին ցուցաբերվող ու-